ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 03

ՀՀ Կոտայքի մարզ, Գառնի բնակավայր *17.05.2024թ.*

Սույն թվականի մայիսի 17-ին ժամը 12.00-ին ՀՀ Կոտայքի մարզի Գառնիի համայնքապետարանում տեղի ունեցավ «Սաներջի» ՍՊ ընկերության կողմից 5 ՄՎտ հզորությամբ արևային կայանի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման վերաբերյալ հանրային քննարկումների (առաջին հանրային քննարկում) նիստը:

Ներկա էին Գառնիի համայնքապետարանի, ձեռնարկողի՝ «Սաներջի» ՍՊԸ, «Քոնսեկոարդ» ՍՊ ընկերության ներկայացուցիչները և համայնքի բնակիչները (մասնակիցների ցանկը՝ ստորագրություններով, և տեսաձայնագրությունը կցվում են արձանագրությանը):

Բացման խոսքով հանդես եկավ Գառնի համայնքի ղեկավարի տեղակալ՝ Վիրապ Կարապետյանը: Վ. Կարապետյանը ողջունեց ներկաներին և շնորհակալություն հայտնեց բոլորին ներկա գտնվելու համար և նշեց, որ համայնքը որևէ առարկություն չունի: Այնուհետև ներկայացրեց հանրային քննարկման առարկան, որից հետո խոսքը փոխանցեց «Քոնսեկոարդ» ընկերության ներկայացուցիչ Միքայել Թևոսյանին:

Մ. Թևոսյանը ներկայացավ, ներկայացրեց Նախագծող ընկերության ներկայացուցիչներին, նշեց, որ համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի այս գործունեությունը ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության բնապահպանական փորձաքննության, հակիրճ ներկայացրեց օրենքի պահանջները:

Այնուհետև ելույթով հանդես եկավ «Էկո վիլ» ՍՊԸ ներկայացուցիչ՝ Լևոն Վարդանյանը: Լ. Վարդանյանն ասաց, որ իրենց կազմակերպությունը հանդիսանում է նախատեսվող գործունեության ոչ միայն նախագծող, այլ նաև կապալառու ընկերություն: Շարունակելով, նա ներկայացրեց նախատեսվող գործունեության տեխնիկական բնութագիրը:

Մ. Թևոսյանն ավելացրեց, որ Ծրագրի իրականացման շրջանակներում նախատեսվում է կառուցել նաև հենապատներ՝ օդային գծերի միացման համար: Անդրադարձավ մոտեցման հնարավոր ճանապարհներին:

Ներկաներից մեկը հետաքրքրվեց նախատեսվող գործունեության տարածքի սեփականության ձևով:

Լ. Վարդանյանը պատասխանեց, որ կայանը կառուցվելու է սեփական հողատարածքի վրա, իսկ հարևությամբ գտնվող հողատարածքները համայնքային հողեր են:

Բնակիչներից մեկը հարցրեց, թե քանի՞ աշխատատեղ է նախատեսվում բացել Ծրագրի իրականացման շրջանակներում:

Լ. Վարդանյանը պատասխանեց, որ շին.աշխատանքների ընթացքում աշխատեղեր ավել շատ կլինեն, կօգտագործվի նաև շին.տեխնիկա, իսկ շահագործման փուլում այդ թիվը կնվազի: Ավելացրեց, որ հնարավորության դեպքում նախապատվությունը կտրվի տեղի բնակչությանը:

Համայնքապետարանի աշխատակից Վարդան Մարտիրոսյանը հարցրեց, թե որոշվա՞ծ է արդյոք էլ.էներգիայի սակագինը:

Լ. Վարդանյանը պատասխանեց, որ սակագինը որոշվում է հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից: Ներկայացրեց սակագնի որոշման ընթացակարգը, նշելով, որ ներկայումս մրցակցությունը բավականին բարձր է՝ կապված արևային կայանների թվի ավելացմամբ:

Վ. Կարապետյանը հարցրեց, արդյո՞ք բնակիչները իրավունք ունեն օգտվել տվյալ ցանցից արտոնյալ սակագնով:

Լ. Վարդանյանը պատասխանեց նշեց որ դա հնարավոր է կազմակերպել բնակիչների անհատական դիմումների հիման վրա:

Այնուհետև Մ. Թևոսյանը նշեց, որ տարածքում իրականացվել են դաշտային հետազոտություններ, որևէ հնագիտական, պատմամշակութային հուշարձաններ, ինչպես նաև Կարմիր գրքային կենդանիներ և բուսատեսակներ չեն հայտնաբերվել: Ավելացրեց, որ շին.աշխատանքների ժամանակ իրականացվելու են շրջակա միջավայրի վրա հնարավոր բնապահպանական ռիսկերի նվազեցմանն ուղղված համապատասխան միջոցառումներ:

Շարունակելով Մ. Թևոսյանն ավելացրեց, որ նախատեսվում է ևս մեկ հանրային լսում, որին ներկա է լինելու նաև շրջակա միջավայրի նախարարության փորձագետը: Ավելացրեց, որ եթե հետագայում լինեն հարցեր և/կամ առաջարկություններ, դրանք կարող են քննարկվել 2-րդ հանրային լսման ժամանակ:

Վ. Կարապետյանը հետաքրքրվեց շինարարության տևողությամբ:

Լ. Վարդանյանը պատասխանեց, որ բարենպաստ եղանակային պայմանների դեպքում շինարարությունը կտևի մի քանի ամիս:

Վարդան Մարտիրոսյանը հարցրեց, արդյո՞ք ամբողջ գյուղը կարող է օգտվել կայանի արտադրած էլեկտրաէներգիայից:

Լ. Վարդանյանը պատասխանեց, որ եթե գյուղն ունի 5ՄՎտ սպառում, ապա՝ այո:

Վ. Մարտիրոսյանը հարցրեց, արդյո՞ք ընկերությունը նախատեսում է հետագայում ընդլանել գործունեությունը:

Մ. Թևոսյանը պատասխանեց, որ ընդլանումը կապված է մի շարք գործոններից:

Քանի որ այլ հարցեր չհնչեցին, Վ. Կարապետյանը շնորհակալություն հայտնեց ներկաներին և փակեց նիստը:

Գառնի համայնքի ղեկավար՝ Տ. Պողոսյան

Հանրային քննարկումների պատասխանատու և վարող՝ Վ. Կարապետյան

Ձեռնարկողի ներկայացուցիչ՝ Մ. Թևոսյան